ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3- Գ-3450

«26» ապրիլի 2022թ.

«Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ,
«Լեվել-Էս» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Սույնով տեղեկացվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար հեռախոսային կայանների, գրասեղանների և ուղղահայաց շերտավարագույրների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները՝

«Լեվել-Էս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում ՍՊԸ-ի անվանումը լրացված չէ ռուսերեն լեզվով, ինչպես նաև Հավելված 1.2-ը կազմված է համապատասխան հրավերի պայմաններին բացառությամբ՝ Հավելված 1.2-ի փոխարեն գրված է Հավելված 1.3 և (***Էլեկտրոնային աճուրդի հրավերի***) փոխարեն գրված է (***ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ***), ինչպես նաև բացակայում է 4.5-ի ա) ենթակետի և 4.7.2 կետի համապատասխան նշումները:

«Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.2-ը բացակայում է (***կցված չէ***):

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ առաջարկվում է Ձեզ մինչև սույն թվականի ապրիլի 27-ը ներառյալ շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ՝

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝. ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/19 ծածկագրով
գնումը համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ 511-792, 511-788